ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 հունիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

84 (3293)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010)   + 374 10 546423   info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՉԱԽՈՂՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԿԼԱՆԱՅԻՆ ԿԱՇԿԱՆԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ



ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը վերջերս հայտարարեց, որ շարունակելու է պաշտոնավարել: Դրանից հետո առողջապահական համակարգում ակտիվացել են քննարկումները նախարարի տեղակալների շուրջ: Չնայած համակարգում առկա բազմաթիվ դժգոհություններին, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, քննարկվում է նաեւ փոխնախարար Լենա Նանուշյանի վերանշանակման տարբերակը: Հենց սա էլ, ըստ առողջապահական համակարգում շրջանառվող գնահատականների, տարակուսանք է առաջացրել մասնագիտական շրջանակներում: Ոլորտում հիշեցնում են, որ Նանուշյանի համակարգման ներքո իրականացված առողջության համընդհանուր հայտարարագրման համակարգը լուրջ քննադատությունների արժանացավ, ձախողվեց փաստացի, չարդարացրեց ակնկալիքները, մինչեւ նախարարը վերցրեց իր ձեռքը գործընթացը եւ ավարտին հասցրեց: Ուստի շատերը համոզված էին, որ քաղաքական պատասխանատվության շրջանակում նա վաղուց պետք է հեռացած լիներ զբաղեցրած պաշտոնից:

Բացի այդ, համակարգում հիշեցնում են նաեւ փոխնախարարի որդու հետ կապված աղմկահարույց պատմությունը, երբ վերջինս առողջական հիմքով ազատվել էր պարտադիր զինվորական ծառայությունից: Թեեւ այդ հանգամանքը իրավական առանձին գնահատականի առարկա է, այնուամենայնիվ, այդ երեւույթը առնվազն բացասաբար է անդրադառնում հանրային պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության ընկալման վրա:

Այս ֆոնին առողջապահական համակարգում չեն թաքցնում իրենց զարմանքը, որ փոխնախարար Լենա Նանուշյանի վերանշանակման սցենարը շարունակում է քննարկվել, այն դեպքում, երբ ոլորտի մի շարք ներկայացուցիչներ ակնկալում էին կադրային փոփոխություններ եւ պատասխանատվության ավելի հստակ դրսեւորում:



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ անցած հինգշաբթի կայացած արտահերթ վարչության նիստը, որտեղ փակ քվեարկությամբ, իսկ ըստ իշխանական շրջանակների՝ փաստացի Նիկոլ Փաշինյանի քաղաքական որոշմամբ, քվեարկվեց իշխող ուժի՝ Ազգային Ժողովի նախագահի թեկնածուն, անցել է լարված մթնոլորտում: «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՔՊ վարչության իրազեկ աղբյուրների փոխանցմամբ՝ նիստի ընթացքում, երբ ամփոփվել են քվեարկության արդյունքները, եւ պարզ է դարձել, որ Ալեն Սիմոնյանը ստացել է ընդամենը 5 ձայն, իսկ առավել մեծ աջակցություն է վայելել Ռուբեն Ռուբինյանը, սրահում իրավիճակը բավականին լարվել է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ալեն Սիմոնյանի նախկին օգնականը, այժմ ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը, տեղեկանալով քվեարկության արդյունքների մասին, անմիջապես եւ ցուցադրաբար դուրս է եկել նիստերի դահլիճից՝ չթաքցնելով իր դժգոհությունը: Դրանից անմիջապես հետո, ըստ մեր աղբյուրների, Ալեն Սիմոնյանն է դուրս եկել, դիմել իր թիկնազորի աշխատակիցներին՝ հարցնելով. «Նայեք՝ լրագրողներ չլինեն, դուրս գանք»: Աղբյուրների փոխանցմամբ՝ այդ քայլը թիմում ընկալվել է որպես դժգոհության բացահայտ ցուցադրում Ռուբեն Ռուբինյանի օգտին կայացված որոշումից:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***



ArmLur.am-ը ԿԿՀ կայքից տեղեկացավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) 2026 թվականի մայիսի 26-ին կայացրած որոշմամբ մերժել է քաղաքացի Ավետիք Չալաբյանի դիմումի հիման վրա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ վարքագծի կանոնների առերեւույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը: Ի՞նչն էր դարձել բողոքի առարկա: Ավետիք Չալաբյանն իր դիմումով պահանջում էր վարույթ հարուցել եւ արձանագրել Նիկոլ Փաշինյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքի եւ պաշտոնատար անձանց Վարքագծի կանոնագրքի խախտումները: Բողոքի հիմքում ընկած էին 2026 թվականի մայիսի 18-ին նախընտրական քարոզարշավի ընթացքում Փաշինյանի հնչեցրած հրապարակային հայտարարությունները: Խոսքը վերաբերում է քաղաքացի Արփինե Սողոյանի եւ լրագրողների հետ ունեցած սուր երկխոսության ընթացքում Փաշինյանի կողմից օգտագործված «կզացնելու ենք», «սատկացնելու եմ», «չոքցնելու եմ» արտահայտություններին՝ ուղղված ընդդիմադիր գործիչներին (Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան, Գագիկ Ծառուկյան, Սամվել Կարապետյան), քաղաքացու հասցեին հնչեցված «ողորմելին դուք եք» եւ «դուք եք կզել, փախել եք» խոսքերին, նախընտրական հանրահավաքի եւ լրագրողների հետ զրույցի ժամանակ համացանցում հայտնված դիմակավորված անձանց տեսանյութին ի պատասխան հնչեցված կոշտ ձեւակերպումներին («համբալներ», «տականքներ», «սատկացնելու եմ բառիս իրավական իմաստով»):

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***



ՀՀ Սահմանադրական դատարանը շարունակում է ընտրությունների արդյունքները վիճարկող դիմումների քննությունը: Դատավարության այս փուլում դատավորներն իրենց հարցերն են ուղղում կողմերին: ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ ՍԴ նիստերի դահլիճում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ Վահագն Հովակիմյանը շարունակում է հայտնվել զավեշտալի վիճակում, երբ դատավորները նրան բարդ ու դիպուկ հարցեր են ուղղում, իսկ վերջինս հաճախ չի կողմնորոշվում, թե ինչպես պատասխանի: ՍԴ-ում տեղի ունեցող այս աղմկահարույց զարգացումների ֆոնին ArmLur.am-ը որոշեց պարզել, թե պաշտոնը ստանձնելուց ի վեր ինչպես է փոխվել ԿԸՀ նախագահի ֆինանսական դրությունը, եւ ինչ ունեցվածք է կուտակել նա: Ստորեւ ներկայացնում ենք Վահագն Հովակիմյանի պաշտոնական հայտարարագրերը: Վահագն Հովակիմյանի 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ նրա տարեկան եկամուտները կազմել են 21,483,900 դրամ: Այդ թվում ներառված են ԿԸՀ-ից ստացված աշխատավարձը, եկամտային հարկի վերադարձը՝ 2,978,699 դրամ, ինչպես նաեւ քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված 155,887 դրամ եկամուտ: Հայտարարագրի տվյալներով՝ Հովակիմյանի սեփականության ներքո է գտնվում Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող անհատական բնակելի տուն՝ հողամասով եւ տնտեսական շինություններով, ինչպես նաեւ հողամաս՝ նույն հասցեում: Այս գույքերը ձեռք են բերվել 2023 թվականի հունիսի 30-ին՝ նվիրատվության ձեւով: Տրանսպորտային միջոցներից նշվում է 2012 թվականի Nissan ավտոմեքենայի օտարումը՝ 1,400,000 դրամով:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ԱՍՏՎԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՍՏԵՂԾԵԼ Է ԱԶԱՏ ԿԱՄՔՈՎ»

**ArmLur.am-ը զրուցել է աժանապատիվ տեր Մարկոս քահանա Մանգասարյանի հետ:**



**- Աստվածաշնչում մի կողմից խոսվում է խաղաղության մասին, մյուս կողմից՝ պատերազմի, իսկ «Մի՛ սպանիր» պատվիրանը շատերի մոտ տպավորություն է ստեղծում, թե քրիստոնյան, հատկապես հոգեւորականը, չպետք է մասնակցի պատերազմին: Որն է եկեղեցու դիրքորոշումը:**

- «Մի՛ սպանիր» պատվիրանը վերաբերում է մարդու եւ մարդու հարաբերությանը, երբ խոսքը անարդար ու անիրավ սպանության մասին է: Սակայն պատերազմի դեպքում իրավիճակն այլ է: Հին Կտակարանում նույնիսկ կան պատերազմի վարման կանոններ: Եթե պատերազմը մղվում է ինքնապաշտպանության, արդարության եւ խաղաղության վերականգնման համար, այն դիտվում է որպես արդարացի պատերազմ:

**- Այսինքն՝ եկեղեցին չի՞ արգելում զինվորական ծառայությունը կամ պատերազմի մասնակցությունը:**

- Ոչ: Կարեւորն այն է, թե ինչ նպատակով է մարդը զենք վերցնում: Եթե նա պաշտպանում է հայրենիքը, իր ժողովրդին եւ անմեղ մարդկանց կյանքը, ապա դա բոլորովին այլ իրավիճակ է, քան անարդար հարձակումը:

**- Իսկ պատերազմում մարդ սպանած զինվորը կարո՞ղ է հոգու փրկություն ունենալ:**

- Ոչ ոք չի կարող ասել, թե ով կփրկվի եւ ով՝ ոչ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ արդար պատերազմի մասնակից զինվորներն իրենց հոգում ծանր բեռ են կրում: Այդ պատճառով եկեղեցու ավանդության մեջ կա ապաշխարության ճանապարհը, որպեսզի մարդը վերագտնի ներքին խաղաղությունը:

**- Ի՞նչ տարբերություն կա «արդարացի պատերազմի» եւ «Տիրոջ պատերազմի» միջեւ:**

- «Արդարացի պատերազմը» եկեղեցական աստվածաբանության տեսություն է, որը հիմնված է ինքնապաշտպանության եւ արդարության սկզբունքների վրա: Իսկ «Տիրոջ պատերազմը» վերաբերում է Հին Կտակարանի այն դեպքերին, երբ Իսրայելի ժողովուրդը պատերազմել է Աստծո կամքով եւ Նրա պատվերով:

**- Քրիստոսն ասել է, որ պատերազմներ լինելու են: Ինչո՞ւ Աստված չի վերացնում պատերազմները:**

- Աստված մարդուն ստեղծել է ազատ կամքով: Եթե Նա վերացներ մարդու ազատ ընտրությունը, մարդը կդադարեր մարդ լինելուց: Պատերազմները մարդկային մեղքի եւ չարի հետեւանք են, ոչ թե Աստծո ցանկությունը:

**- Այսօր, երբ ապրում ենք հետպատերազմյան շրջանում, արդյո՞ք իսկապես խաղաղության մեջ ենք:**

- Ավելի կարեւոր հարց կա՝ արդյո՞ք մենք հասկացել ենք մեր պարտությունը: Եթե չենք ընդունում ու չենք վերլուծում մեր սխալները, չենք կարող նոր հաղթանակներ կերտել: Պարտությունը պետք է գիտակցել, հասկանալ դրա պատճառները եւ դասեր քաղել:

**- Ի՞նչ խորհուրդ կտաք հայ ժողովրդին:**

- Յուրաքանչյուր մարդ պետք է պատվով կատարի իր կոչումն ու պարտականությունը՝ լինի զինվոր, հոգեւորական, ուսուցիչ, արվեստագետ կամ պետական գործիչ: Հովհաննես Մկրտիչն էլ զինվորներին ասում էր՝ մարդկանց չնեղել, բավարարվել իրենց վարձքով եւ չտրվել թալանի գայթակղությանը:

**- Ձեր անձնական կյանքում եղե՞լ է մի շրջան, որը կարող եք անվանել Ձեր խաչի ճանապարհը:**

- Եթե անկեղծ լինեմ, չեմ կարող առանձնացնել մի կոնկրետ փուլ, որը կկոչեի իմ կյանքի խաչի ճանապարհը: Հոգեւոր կյանքն ամբողջությամբ փորձությունների եւ աճի ճանապարհ է, եւ այդ ճանապարհը շարունակվում է ամեն օր:

*Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ



Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոհան Վադեֆուլի կարծիքով՝ հունիսի 7-ին Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրություններում ՀՀ քաղաքացիները վերահաստատել են իրենց աջակցությունը երկրի եվրոպամետ կառավարությանը՝ ազդարարելով ռուսական ազդեցությունն ու հարկադրանքը նվազեցնելու եւ Եվրոպայի հետ կապերը խորացնելու շարունակական ցանկությունը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին Գերմանիայի ԱԳ նախարարը նշել է instagram-ի իր էջում Էստոնիայի ԱԳ նախարար Մարգուս Ցահքնայի հետ համատեղ տարածած տեսանյութին կից գրառման մեջ: «Հայ ընտրողները վերջերս վերահաստատեցին աջակցությունը իրենց երկրի եվրոպամետ կառավարությանը՝ ազդարարելով ռուսական ազդեցությունն ու հարկադրանքը նվազեցնելու եւ Եվրոպայի հետ կապերը խորացնելու շարունակական ցանկությունը»,-իր գրառման մեջ նշել է Գերմանիայի ԱԳ նախարարը՝ անդրադառնալով հունիսի 7-ին Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներին, որոնց համաձայն՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կպահպանի մեծամասնությունն Ազգային ժողովում ու կկարողանա միանձնյա կառավարություն ձեւավորել: Նրա խոսքով՝ ինչպես աշխարհի շատ այլ երկրներ, այնպես էլ Հայաստանը, Մոլդովան, Ուկրաինան, Հունգարիան լուրջ թիրախ են դարձել ռուսական քարոզչական արշավների, որոնք ուղղված են նրանց հասարակությունները պառակտելուն եւ ժողովրդավարական ինստիտուտները խաթարելուն: «Այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը վերջերս յուրովի է հակադարձել Ռուսաստանի ազդեցության արշավներին՝ ավելի ուժեղ դարձնելով ոչ միայն իրենց, այլեւ ամբողջ Եվրոպան»,-գրել է Յոհան Վադեֆուլը:

## ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ԿԹՎԱՅՆԱՑՎԻ

Ներդրվող նոր ծրագրային ապահովման շնորհիվ վարույթները կիրականացվեն էլեկտրոնային եղանակով: Կացության կարգավիճակ ստանալու դիմումը հնարավոր կլինի ներկայացնել գործարկվող permit.am հարթակի միջոցով՝ առանց Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն այցելելու, կցել անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաեւ առցանց շտկել արձանագրված թերությունները: Ծառայություն այցելելու անհրաժեշտություն կլինի միայն մեկ անգամ: Անող դիմումների հոսքի պայմաններում գործընթացի թվայնացումը նպատակ ունի բեռնաթափել համակարգը, բարձրացնել ծառայությունների մատուցման արդյունավետությունը եւ քաղաքացիներին ազատել հերթերում սպասելու անհրաժեշտությունից:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ՄԱՆԴԱՏԻՑ ԿՀՐԱԺԱՐՎԻ

ArmLur.am-ը դեռ հունիսի 10-ին տեղեկացրել էր, որ Ազգային Ժողով անցած նոր ձեւավորված ընդդիմադիր քաղաքական ուժերում քննարկումներ են ընթանում պատգամավորական մանդատների ստանձնման հարցի շուրջ: Մենք նշել էինք, որ ընդդիմադիր ուժերը նպատակ ունեն վերցնել մանդատները, գնալ ու աշխատել ԱԺ-ում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության դաշինքում կան թեկնածուներ, որոնք մտադիր են հրաժարվել պատգամավորական մանդատներից: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝մանդատից հրաժարվելու նպատակ ունի «Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակով պատգամավորի թեկնածու առաջադրված Լիլիա Շուշանյանը:

ArmLur.am-ի աղբյուրների համաձայն՝ նման մտադրություն ունեն նաեւ Գոհար Մելոյանն ու Արամ Վարդեւանյանը, սակայն նրանց դեպքում հարցը դեռեւս քննարկման փուլում է, եւ վերջնական որոշում չի կայացվել:

Ո՞վ է Լիլիա Շուշանյանը: Լիլիա Շուշանյանը միջազգայնագետ է եւ հանրային կառավարման ոլորտի մասնագետ: Նա ծնվել է 1991 թվականին Երեւանում, ավարտել է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը՝ ստանալով հանրային կառավարման բակալավրի եւ մագիստրոսի աստիճաններ: 2019 թվականին նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ: Վերջին շրջանում նա ներգրավված է քաղաքական գործունեության մեջ եւ մասնակցել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության գործունեությանը՝ ընդգրկվելով նաեւ կուսակցության պատգամավորության թեկնածուների ցանկում:

*Ս. Գ.*

## ԹԵԺ ՊԱՅՔԱՐ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում ավարտվել է Ազգային Ժողովի փոխնախագահի պաշտոնների համար թեկնածուների առաջադրման գործընթացը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ԱԺ փոխնախագահի պաշտոնում իրենց թեկնածությունն են առաջադրել հինգ ՔՊ-ական պատգամավորներ՝ Վահագն Ալեքսանյան, Արման Եղոյան, Հայկ Կոնջորյան, Ալխաս Ղազարյան, Արուսյակ Ջուլհակյան:

Ըստ նույն աղբյուրի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունը հաջորդ շաբաթ կանցկացնի փակ, գաղտնի քվեարկություն, որի արդյունքում կընտրվեն Ազգային Ժողովի փոխնախագահի պաշտոնում առաջադրվող երկու թեկնածուները:

ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ թեժ մրցակցություն է ընթանում թեկնածուների միջեւ: Մեր աղբյուրները նշում են, որ շատ թեժ պայքար է սպասվում: Իշխանական մեր աղբյուրները նշում են, որ այս պահին կարծես թե լավ դիրքերում են Վահագն Ալեքսանյանն ու Ալխաս Ղազարյանը, ովքեր կուսակցության ներքին ընտրություններում եւս բարձր ցուցանիշ են գրանցել: Ըստ կուսակցության ներկայացուցիչների՝ Արուսյակ Ջուլհակյանը եւս կարծես թե ուժեղ մրցակից է համարվում:

Հիշեցնենք, որ հունիսի 25-ին ՔՊ վարչության փակ քննարկման ժամանակ ԱԺ նախագահի թեկնածու է ընտրվել Ռուբեն Ռուբինյանը:

*Ս. Գ.*

## ԱՄՆ-Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀՐԱՎԻՐԻ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն իր կաբինետի անդամներին ասել է, որ «շատ լուրջ» է վերաբերվում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ իրեական պետության վերաբերյալ հռետորաբանությանը եւ այս մտահոգությունները կներկայացնի Միացյալ Նահանգների ուշադրությանը: «Մենք նրա խոսքերը շատ լուրջ ենք ընդունում, քանի որ եթե մենք ինչ-որ բան սովորել ենք մեր ժողովրդի պատմությունից, դա այն է, որ երբ ինչ-որ մեկն ասում է, որ մտադիր է ոչնչացնել ձեզ, նրա խոսքերը պետք է լուրջ ընդունվեն», -ասել է Նեթանյահուն կաբինետի նիստում՝ ըստ Times of Israel-ի: Նեթանյահուն ընդգծել է, որ նման հայտարարությունները կներկայացնի ամերիկացի գործընկերների ուշադրությանը:

Հրապարակման համաձայն՝ Էրդողանը եւ այլ բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ վերջերս ուժեղացրել են Իսրայելի դեմ ուղղված իրենց սպառնալիքները, իսկ Թուրքիայի ներքին գործերի նախարարը հույս է հայտնել հունիսի սկզբին «Երուսաղեմի ազատագրման» վերաբերյալ: Կիրակի Իսրայելի կառավարությունը հաստատել է Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ: Ի պատասխան՝ Թուրքիայի նախագահը կրկին մեղադրել է Իսրայելին Գազայի հատվածում պաղեստինցիների դեմ ցեղասպանություն իրականացնելու մեջ՝ ընդգծելով, որ կարծում է՝ մեղավորներն անխուսափելիորեն պատասխանատվության կենթարկվեն:

## ՆԱՎԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է 80%-ՈՎ

Հորմուզի նեղուցով առեւտրային նավերի տարանցումը շաբաթավերջին նվազել է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հակամարտության վերջին սրման պատճառով նավագնացների մտահոգությունների պատճառով, հաղորդում է Bloomberg-ը՝ հղում անելով նավագնացության հետեւման տվյալներին: Տվյալների համաձայն՝ կիրակի օրը նեղուցով երկու ուղղություններով անցել է 12 նավ: Սա շաբաթ օրվա թվի կեսից ավելին է, երբ տեղի ունեցավ տանկերների վրա հարձակումներից մեկը: Այդ օրը առեւտրային նավերը ջրային ճանապարհը հատել են 28 անգամ: Հունիսի 24-ին՝ վերջին սրացումից առաջ, նեղուցով անցել է 58 նավ, ինչը ամենաբարձր թիվն է փետրվարի վերջից ի վեր, երբ սկսվեց ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունը Իրանի դեմ: Գործակալության տվյալներով՝ նավատերերը տարաձայնություններ ունեն նեղուցով մոտ ապագայում նավագնացության հեռանկարների վերաբերյալ: Նավերի ուղղությամբ շարժվող որոշ նավեր որոշել են չփորձել տարանցում: Գործակալության կողմից հարցազրույց տված նավատերերը հայտնել են, որ ժամանակավորապես դադարեցրել են նեղուցով նավագնացության ծրագրերը:

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏՔ, ԹԵ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՐԱԿ

# ԻՆՉՈՒ ԻՍՐԱՅԵԼԸ ՀԵՆՑ ՀԻՄԱ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**2026 թվականի հունիսի 28-ին միջազգային լրահոսը պայթեցրեց ուշագրավ մի լուր. Իսրայելի կառավարությունը՝ արտաքին գործերի նախարար Գիդեոն Սաարի նախաձեռնությամբ եւ վարչապետ Բենիամին Նեթանյահուի աջակցությամբ, միաձայն հավանություն տվեց Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչմանը:**



Իսրայելական կողմն այս քայլն անմիջապես շղարշեց բարոյական բարձր արժեքներով՝ հայտարարելով, որ հրեական պետությունը «կատարեց իր բարոյական պարտքը պատմական ճշմարտության հանդեպ»: Սակայն միջազգային հարաբերություններում բարոյականությունն ու պատմական ճշմարտությունը հազվադեպ են առաջնային շարժիչ ուժ հանդիսանում: Իրականում, Թել Ավիվի այս որոշումը բացառապես սառը աշխարհաքաղաքական հաշվարկի եւ վերջին տարիներին թուրք-իսրայելական հարաբերությունների խարխլման արդյունքն է:

Միջազգային դիվանագիտության մեջ կա մի անժխտելի իրողություն. աշխարհի ոչ մի ազդեցիկ պետություն Հայոց ցեղասպանությունը չի ճանաչել կամ ճանաչում Հայաստանի այս կամ այն ժամանակվա իշխանությունների պահանջով: Պատմական փորձը ցույց է տալիս, որ պետությունները գնում են այդ քայլին միայն երկու հստակ դեպքում.

1. Ուժեղ հայկական համայնքի եւ լոբբինգի առկայություն. Երբ տվյալ երկրի ներսում կա կազմակերպված, ֆինանսապես ու քաղաքականապես ազդեցիկ հայկական համայնք, որն ընտրությունների ժամանակ կարող է ձայներ ապահովել կամ քաղաքական ճնշում գործադրել (ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայում կամ ԱՄՆ-ի առանձին նահանգներում):

2. Աշխարհաքաղաքական նկատառումներ եւ սեփական շահեր. Սա ամենատարածված դրդապատճառն է: Ցեղասպանության ճանաչումն օգտագործվում է որպես «մտրակ» կամ քաղաքական ճնշման գործիք Թուրքիայի դեմ՝ վերջինիս հավակնությունները զսպելու կամ դիրքերը թուլացնելու համար:

Այս երկու պայմանների եւ միջազգային հարաբերությունների դաժան պրագմատիզմի մասին Հայաստանի ներքաղաքական դաշտում տասնամյակներ շարունակ մշտապես զգուշացրել է ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նա իր ելույթներում եւ հոդվածներում (դեռեւս 1990-ականներից սկսած) հետեւողականորեն պայքարում էր հայկական դիվանագիտության մեջ արմատացած «ռոմանտիզմի» եւ պատրանքների դեմ: Տեր-Պետրոսյանը հստակ ձեւակերպել էր թեզը. օտար պետությունները Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնում կամ դնում են դարակը ոչ թե հայերի հանդեպ ունեցած սիրուց կամ արդարության զգացումից դրդված, այլ Անկարայի հետ իրենց ընթացիկ հարաբերությունների համատեքստում: Երբ նրանց պետք է ճնշել Թուրքիային, հարցը բերում են օրակարգ, երբ հարաբերությունները լավանում են, հարցը մոռացվում է:

***ԵՄ «արգելապատնեշը». ինչպես Ցեղասպանության հարցով փակվեց Թուրքիայի ճանապարհը***

Որպեսզի հասկանանք Իսրայելի ներկա քայլը, բավական է հայացք նետել եվրոպական երկրների փորձին, որոնք այս խաղաքարտն օգտագործեցին ամենախոշոր աշխարհաքաղաքական նպատակի՝ Թուրքիայի՝ Եվրոմիություն մուտքը տապալելու համար: Երբ Թուրքիան ակտիվորեն փորձում էր անդամակցել ԵՄ-ին, եվրոպական հսկաները՝ Գերմանիան, Ֆրանսիան, ինչպես նաեւ Շվեդիան ու Շվեյցարիան, լուրջ մտահոգություններ ունեին: Թուրքիայի պես հսկայական բնակչություն ունեցող երկրի մուտքը ԵՄ կփոխեր ողջ եվրոպական ճարտարապետությունը, եւ Անկարան Եվրախորհրդարանում կունենար ամենաշատ պատգամավորական տեղերը՝ թելադրելով իր կամքը: Բացահայտ «ոչ» չասելու համար եվրոպական պետությունները Թուրքիայի առաջ դրեցին ժողովրդավարական, մարդու իրավունքների եւ պատմական անցյալի հետ առերեսման անհաղթահարելի նշաձողեր:

Գերմանիա (2016 թ.). Բունդեսթագը ճանաչեց Ցեղասպանությունը հենց այն ժամանակ, երբ Անկարան միգրացիոն ճգնաժամի ֆոնին փորձում էր շանտաժի ենթարկել Եվրամիությանը: Բացի այդ, Գերմանիան, ինչպես նաեւ Շվեդիան ու Շվեյցարիան, այս խաղաքարտը պարբերաբար օգտագործել են Եվրոպական Միությանը Թուրքիայի անդամակցության հեռանկարը տապալելու եւ եվրոպական տարածաշրջանում թուրքական ազդեցության աճը թույլ չտալու համար: Դա արվել է Թուրքիայի դիրքերը միջազգային ասպարեզում թուլացնելու նպատակով: Դրանով նրանք ստեղծեցին մի իրավիճակ, որտեղ Թուրքիան, իր ազգայնական կեցվածքից ելնելով, երբեք չէր ընդունի այդ պայմանը, ինչն էլ հիանալի, «լեգիտիմ» առիթ դարձավ Թուրքիայի ԵՄ անդամակցության գործընթացը հավերժ սառեցնելու համար: Ցեղասպանության ճանաչումը դարձավ այն քաղաքական արգելապատնեշը, որով եվրոպական մայրաքաղաքները փակեցին Էրդողանի ճանապարհը դեպի Եվրոպա:

***Իսրայել-Թուրքիա ներկա հարաբերությունները. ինչո՞ւ հենց հիմա***

Տասնամյակներ շարունակ Իսրայելը հրաժարվում էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որովհետեւ Թուրքիան հրեական պետության կարեւորագույն ռազմավարական եւ տնտեսական գործընկերն էր Մերձավոր Արեւելքում: Սակայն ամեն ինչ փոխվեց 2023 թվականի հոկտեմբերին Գազայի հատվածում բռնկված պատերազմից հետո: Այս իրադարձությունից հետո իսրայելա-թուրքական հարաբերությունները գահավիժեցին անդունդը.

***Ռեջեփ Թայիփ Էրդողանի կոշտ հռետորաբանությունը***

Թուրքիայի նախագահը բազմիցս Իսրայելին անվանեց «ահաբեկչական պետություն», իսկ Նեթանյահուին համեմատեց Հիտլերի հետ՝ բացահայտ աջակցություն հայտնելով ՀԱՄԱՍ-ին:

***Տնտեսական պատժամիջոցներ***

Անկարան ամբողջությամբ դադարեցրեց առեւտրաշրջանառությունը Իսրայելի հետ՝ հարվածելով վերջինիս տնտեսությանը: Այս պայմաններում Իսրայելի համար այլեւս իմաստ չկար խնայելու Թուրքիայի «նրբանկատությունը»: Ինչպես նշել է ԱԳՆ ղեկավար Գիդեոն Սաարը՝ Թուրքիայի կառավարությունը տարիներ շարունակ իրականացնում է «ժխտողականության եւ պատմության մանիպուլյատիվ վերաշարադրման ինստիտուցիոնալ արշավ»: Հայոց ցեղասպանության ճանաչումն Իսրայելի կողմից Անկարային ուղղված ասիմետրիկ պատասխան հարված է: Թել Ավիվը հասկացնում է Էրդողանին, որ հակաիսրայելական քաղաքականությունն ունի իր գինը, եւ Իսրայելն այսուհետ օգտագործելու է իր ողջ դիվանագիտական ու տեղեկատվական արսենալը՝ Թուրքիայի հեղինակությանը միջազգային ասպարեզում մահացու հարված հասցնելու համար:

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը եւս մեկ անգամ ապացուցում է ռեալպոլիտիկի (Realpolitik) դաժան օրենքը: Պատմական արդարությունը միջազգային հարթակներում հաղթում է միայն այն ժամանակ, երբ այն վերածվում է մտրակի եւ համընկնում է գերպետությունների ընթացիկ շահերի հետ: Հայ ժողովրդի պատմական ցավն ու քաղաքական գործոնը եւս մեկ անգամ հայտնվեցին մեծ տերությունների կշեռքի նժարին՝ ծառայելով որպես ազդեցիկ գործիք Մերձավոր Արեւելքում աշխարհաքաղաքական հաշվեհարդարներ տեսնելու համար:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ԲԱՐՁՐ Է 5 ՍՄ-ՈՎ

Սեւանա լճի մակարդակը նախորդ տարվա հունիսի 29-ի համեմատ արդեն բարձրացել է 5 սանտիմետրով: Այս մասին տեղեկացել է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրից, 2026 թվականի հունիսի 29-ին Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 75 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրը գրանցված 1900 մետր 70 սանտիմետր նիշի դիմաց: Իսկ 2026 թվականի հունվարից մինչ հունիսի 29-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 53 սանտիմետրով: Տվյալ ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 134 միլիոն 306 հազար խմ ջուր: Սեւանա լճից Հրազդանի հունով ոռոգման նպատակներով ջրբացթողումներ առայժմ չեն իրականացվում:

ԻՆՉՈ՞Ւ ՍՊԱՆՎԵՑ

# ՇԱՆԹԻ ՅՈՒՐԱՆ՝ ԻՐ ՏԱՆ ՎՐԱ ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

**Օրերս Հակակոռուպցիոն դատարան էր ներկայացել գործարար Յուրա Ղարիբյանը՝ հայտնի որպես Շանթի Յուրա, եւ դատարանում ցուցմունք էր տալիս ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Աղվան Հովսեփյանի դեմ:**



Նիստի ավարտից հետո հարցեր ուղղեցինք գործարար Յուրա Ղարիբյանին՝ Շանթի Յուրային, 12 տարի առաջ իր տան վրա տեղի ունեցած ավազակային հարձակման մասին, որի հետեւանքով ավազակային հարձակում իրականացնողը սպանվեց: Իսկ թե ինչ կատարվեց, ներկայացնենք ամենասկզբից:

2014 թվականի դեկտեմբերի 15-ին ավազակային հարձակում էր տեղի ունեցել Երեւանի Բաշինջաղյան 65 հասցեում գտնվող տանը, որը պատկանում է գործարար, «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի սեփականատեր Յուրա Ղարիբյանին: Սակայն ավազակային հարձակումը բավականին հարցականներ է առաջացրել իրավապահների շրջանում, որոնք փորձել են գտնել գործարարի եւ ավազակային հարձակում իրականացնողի միջեւ առկա հնարավոր կապը:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ ժամը 14:30-ի սահմաններում Երեւանի բնակիչ 39-ամյա Գեւորգ Սարգսյանը, զինված եւ դիմակավորված, մուտք է գործել նշված հասցեի տուն, ընտանիքի անդամներից սպառնալիքի միջոցով պահանջել թանկարժեք զարդեր եւ գումար: Նա իր մոտ եղած ողորկափող հրացանից կրակոցներ էր արձակել տանը գտնվող անձանց ուղղությամբ: Տան անդամները Գեւորգ Սարգսյանին դիմադրություն էին ցույց տվել, որի ընթացքում վերջինս կտրող-ծակող առարկայով մարմնական վնասվածքներ էր ստացել եւ, գիտակցության չգալով, հիվանդանոցում մահացել:

Նշենք, որ երբ Գեւորգ Սարգսյանը մուտք էր գործել գործարարի տուն, այնտեղ եղել էին միայն կանայք՝ տանտիրուհին, մայրը, դայակը եւ մեկ տարեկան երեխան: Ընտանիքի հայրը՝ Յուրա Ղարիբյանը, տուն էր եկել ավելի ուշ՝ հեռախոսով լսելով ահաբեկման ձայները: Քննության տվյալներով՝ ամուսինը զանգահարել էր կնոջ հեռախոսահամարին, հեռախոսազանգը միացել էր, սակայն կինը չէր խոսել: Փոխարենը լսվել էր մի տղամարդու ձայն, որը ահաբեկել էր ընտանիքի անդամներին եւ նրանցից գումար էր պահանջել՝ սպառնալով սպանել: Նա անմիջապես գնացել էր տուն, իսկ վարորդին հանձնարարել էր զանգահարել ոստիկանություն: Զինված տղամարդու կողմից կրակոցներ էին արձակվել ընտանիքի հոր, կնոջ եւ դայակի ուղղությամբ, որի գրկին եղել էր մանկահասակ երեխա:

*Ավազակային հարձակման առեղծվածը*

Նկատենք, որ այս ավազակային հարձակումը մի շարք հարցականներ է առաջացրել ոչ միայն հասարակության, այլեւ իրավապահների շրջանում: Դատելով մինչ այդ տեղի ունեցած դեպքերից՝ ավազակային հարձակում իրականացնողները սովորաբար բնակարաններ կամ առանձնատներ են մուտք գործում երեկոյան ժամերին: Սակայն այս դեպքում Գեւորգ Սարգսյանը գործարարի տուն էր մտել ժամը 14:00-ի սահմաններում, ինչը կասկածների տեղիք էր տալիս: Միգուցե Գեւորգ Սարգսյանի նպատակը գործարարին թալանելը չի եղել, այլ նա այլ հարց է ունեցել Վարշամ (Յուրա) Ղարիբյանի հետ:

Իսկ ո՞վ էր Գեւորգ Սարգսյանը եւ ի՞նչ կապ կարող էր ունենալ գործարարի հետ:

*Հայտնի փեսայի առեղծվածը*

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ Գեւորգ Սարգսյանն ապրում էր Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան փողոցում կամ, ինչպես առավել հայտնի է, Չերեմուշկա թաղամասում: Նա քրեական աշխարհում հայտնի Գեչի Սամոյի փեսան է եղել: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ նա ֆինանսական խնդիրներ է ունեցել, բացի այդ՝ կորցրել էր բենզալցակայանը: Այսպիսով, ի՞նչը կարող էր նրան դրդել գնալ այդ քայլին. դա այդպես էլ մնաց անհայտ:

Եւ այսպես, այս աղմկահարույց եւ առեղծվածային դեպքի մասին հենց Հակակոռուպցիոն դատարանի բակում հարցեր ուղղեցինք գործարար Շանթի Յուրային:

*Շարունակությունը՝ ArmLur.am կայքում*

***ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ԿԵՂԾ ՕՂԻՆԵՐՈՎ ՄԵՔԵՆԱ

Հունիսի 25-ին՝ գիշերվա ժամը 3.30-ին, Արարատի մարզի Արեւշատ գյուղի հատվածում ծառայություն իրականացնելիս, պարեկները կանգնեցրել են «ՎԱԶ-21074» մակնիշի մի ավտոմեքենա: Ստուգման ընթացքում պարեկները մեքենայում նկատել են մեծ քանակի օղիներ, որոնց վերաբերյալ վարորդը՝ մայրաքաղաքի Շիրակի փողոցի բնակիչ 24-ամյա երիտասարդը, հայտնել է, թե սրահում եւ բեռնախցիկում գտնվող 120 շիշ կեղծ օղին ձեռք է բերել շուկայում՝ վերավաճառելու նպատակով: Երիտասարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Արտաշատի բաժին, պահպանվող հատուկ տարածքում մեքենան կնիքվել է: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արարատի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

## ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «Խաք» ՍՊ ընկերությանը պատկանող կաթնամթերքի («Արարատյան» ապրանքանիշ) արտադրամասում (Արարատի մարզ, գյուղ Քաղցրաշեն) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են սահմանված սանիտարահիգիենիկ պահանջները, մասնավորապես՝

- արտադրական շինության նախագծումը, կառուցվածքը չեն ապահովել պարենային հումքի, փաթեթավորման նյութերի եւ սննդամթերքի պահպանման պայմանները,
- հատակների մակերեւույթները, պատերը, առաստաղները չեն ունեցել հարթ մակերես, չեն պահվել նորոգ վիճակում,
- արտադրական շինության դռները հարթ չեն եղել, պատրաստված չեն եղել չներծծող նյութերից,
- թափոնները չեն տեղադրվել բացառապես այդ թափոնների եւ աղբի հավաքման եւ պահպանման համար օգտագործվող փակվող տարողություններում:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կաթնամթերքի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է մինչեւ հայտնաբերված խախտումները վերացնելը:

## ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Իրավապահները մայրաքաղաքում թմրամիջոց պահելու դեպքեր են բացահայտվել: Այս մասին հայտնում են ՆԳՆ ոստիկանույունից: Մալաթիայի համայնքային ոստիկանները ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հունիսի 23-ին՝ ժամը 12:10-ին, խուզարկություն են իրականացրել 33-ամյա տղամարդու բնակարանում: Հայտնաբերվել է 1 կիլոգրամ եւ 750 գրամ տարողությամբ 6 ապակյա տարա՝ ամբողջությամբ լցված դեղնականաչավուն, մանրացված եւ չորացված զանգվածով, կանեփի 40 կանաչ բույս, ինչպես նաեւ մոխրացած հետքերով մեկ ծխամորճ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին: Ոստիկանության գվարդիայի ծառայողները նույն օրը՝ ժամը 12:15-ին, Ազատության պողոտայի հասցեներից մեկից, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու վերաբերյալ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա, ձերբակալել եւ Քանաքեռ-Զեյթունի բաժին են տեղափոխել 23-ամյա երիտասարդի: Անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 1,31 գրամ ընդհանուր քաշով թղթե փաթեթ՝ լցված դեղնականաչավուն զանգվածով, ինչպես նաեւ մոխրացած հետքերով մեկ բժշկական կաթոցիչ: Երիտասարդի հայտարարության համաձայն՝ հայտնաբերվածը մարիխուանա է, որը գնել է անձնական օգտագործման նպատակով: Երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

## ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Հունիսի 25-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի ծառայողները, ձեռնարկած օպերատիվ-միջոցառումների արդյունքում, մայրաքաղաքի Աբովյան-Պուշկինի փողոցների խաչմերուկում ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել 2020 թվականի հուլիսից՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությանն օժանդակելու մեղադրանքով հետախուզվող 35-ամյա տղամարդուն: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է 9 փամփուշտով լիցքավորված ատրճանակ: Ձերբակալվածն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժին: Նախաքննությունը շարունակվում է:

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԴԱՍԸՆԹԱՑ

Կիբեռտարածությունում մարտահրավերները շարունակաբար փոխվում են եւ դրանց արդյունավետ հակազդելու համար անհրաժեշտ է ոչ միայն ժամանակակից գործիքակազմ, այլեւ ոլորտային մասնագետների բարձր պատրաստվածություն: Այդ համատեքստում Հայաստանի եւ Ֆրանսիայի ՆԳ նախարարությունների սերտ համագործակցությամբ՝ հունիսի 22-ին ՆԳՆ կրթահամալիրում մեկնարկել է կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտում կարողությունների զարգացման դասընթացը: «Այս դասընթացը թույլ կտա ՆԳՆ քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողներին զարգացնել իրենց գիտելիքներն ու կարողությունները համակարգչային հանցավորության, կիբեռհանցավորության բացահայտման եւ դրա դեմ արդյունավետ պայքարի կազմակերպման ոլորտում»,- նշել է ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր Միսակ Մարկոսյանը: Հարավային Կովկասում Ֆրանսիայի ոստիկանության ատաշե Օլիվիե Լեֆեբրը ողջունել է վերապատրաստման մասնակիցներին եւ նշել, որ դասընթացը հնարավորություն կտա ծանոթանալ թվային հետաքննությունների, բաց աղբյուրների հետախուզության, կրիպտոարժույթների եւ Դարքնեթ միջավայրում տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության մեթոդներին: ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր Միսակ Մարկոսյանը մասնագիտական աջակցության համար շնորհակալություն է հայտնել ֆրանսիացի գործընկերներին՝ ընդգծելով, որ միջազգային առաջավոր փորձի փոխանակումը կնպաստի թե՛ ծառայողների հմտությունների կատարելագործմանը, թե՛ ՆԳՆ համակարգում արդի մոտեցումների ներդրմանը: Վերապատրաստման կարեւոր մասն են կազմում գործնական վարժությունները, որոնք մասնակիցներին հնարավորություն կտան ամրապնդել ձեռք բերած գիտելիքներն ու տարբեր սցենարային իրավիճակներում կիրառել դրանք: Դասընթացը հերթական կարեւոր քայլն է՝ Հայաստանի եւ Ֆրանսիայի ՆԳ նախարարությունների միջեւ գործընկերային կապի ամրապնդման եւ կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտում կարողությունների շարունակական զարգացման հանձնառության ուղղությամբ:

● *Ըստ վիճակագրության՝ Հայաստանի Հանրապետությունում հունիսի 26-ից 29-ը հայտնաբերվել է 1 անհետ կորած:*

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՕԳՏՎԵԼ

ԵԱՏՄ անդամների համար անընդունելի է այն իրավիճակը, երբ Հայաստանն իր օրենսդրության մեջ ամրագրում է ԵՄ-ին անդամակցելու մտադրությունը՝ շարունակելով օգտվել Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու բոլոր բարիքներից եւ առավելություններից: Այդ կապակցությամբ Մոսկվայում ոչ այնքան հասկանում են, թե ինչու հայկական ղեկավարությունը չի շտապում հանրաքվե անցկացնել այդ միավորումներին անդամակցության վերաբերյալ: Այս մասին RTVI-ին տված հատուկ հարցազրույցում ասել է Ռուսաստանի արտաքին գործերի փոխնախարար Միխայիլ Գալուզինը: «Ինչպես գիտեք, ԵԱՏՄ անդամ երկրների՝ կոնկրետ Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Բելառուսի տնտեսական անվտանգության համար առկա ռիսկերի վերաբերյալ իրենց մտահոգությունը հայտնել են իմ նշած բոլոր չորս պետությունների ղեկավարները մայիսի 29-ին՝ Աստանայում Բարձրագույն եվրասիական տնտեսական խորհրդի նիստի ընթացքում»,- նշել է Միխայիլ Գալուզինը RTVI-ի հետ զրույցում: Դիվանագետի խոսքով՝ մինչեւ դեկտեմբեր փորձագետները կմշակեն թե՛ տնտեսական, թե՛ իրավական ասպեկտները՝ կապված ԵԱՏՄ-ում Հայաստանի մասնակցությունը կասեցնելու հնարավոր հետեւանքների հետ: Ռուսաստանի ԱԳ փոխնախարարը հիշեցրել է, որ ԵԱՏՄ երկրների չորս նախագահները համատեղ հայտարարության մեջ հանդես են եկել այն բանի օգտին, որ այդ հանրաքվեն անցկացվի մոտ ապագայում, քանի որ հանրաքվեի անցկացումը, ըստ հայկական օրենսդրության, անհրաժեշտ է Հայաստանի՝ վերպետական ինտեգրացիոն կառույցներին անդամակցելու ժամանակ: «Ուստի մենք, անկեղծ ասած, այնքան էլ չենք հասկանում, թե ինչու հայկական ղեկավարությունը չի շտապում հարցնել երկրի բնակիչներին՝ նրանց վերաբերմունքը իրենց համար այս շատ կարեւոր հարցի վերաբերյալ: Երեւի, չեմ բացառում, որ այդ դանդաղկոտության համար կան որոշակի կոնյունկտուրային նկատառումներ, չէ՞»,- մեկնաբանել է փոխնախարարը հանրաքվեի թեման: RTVI-ի զրուցակցի խոսքով՝ ԵԱՏՄ անդամների համար անընդունելի է այն իրավիճակը, երբ Հայաստանը պաշտոնապես հայտարարում է, օրենսդրորեն ամրագրում իր այսպես կոչված եվրոձգտումները՝ շարունակելով օգտվել Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու բոլոր բարիքներից եւ առավելություններից: «Իմ կարծիքով, անցյալ տարվա ապրիլին Հայաստանում ընդունված օրենքը կոչվում է «Եվրոպական միությանը անդամակցելու գործընթացը սկսելու մասին»: Ի՞նչ է մեզ ձեզ հետ եւս պետք, որպեսզի արձանագրենք, որ Հայաստանի՝ Եվրոպական միությանը անդամակցելու գործընթացը սկսված է. ընդունվել է հատուկ օրենք այդ թեմայով: Եվ ես այստեղ այլ մեկնաբանություններ չեմ տեսնում»,- ասել է Ռուսաստանի ԱԳ փոխնախարարը այն հարցի վերաբերյալ, որ Հայաստանը դեռեւս պաշտոնական հայտ չի ներկայացրել ԵՄ-ին անդամակցելու համար եւ չունի թեկնածուի կարգավիճակ:

7 ՏԱՐԻ ԱԺ-ՈՒՄ

# ԻՆՉՊԵ՞Ս Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՆՈՒՄ ՄԵՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԸ

**Ազգային Ժողովի 8-րդ գումարման ավարտին իշխանական պատգամավորների հայտարարագրերը շարունակում են բազմաթիվ հարցեր առաջացնել: Այս անգամ ուշադրության կենտրոնում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մերի Գալստյանը, որի պաշտոնավարման հինգ տարիների ֆինանսական պատկերը բավականին հակասական է:**




Մերի Գալստյանը խորհրդարան է մտել 2018 թվականի հեղափոխությունից հետո՝ որպես «Իմ քայլը» դաշինքի ներկայացուցիչ: Ըստ նրա հայտարարագրերի՝ 2021-2025 թվականներին պատգամավորը չի հայտարարագրել որեւէ բնակարան, տուն, հողամաս, ավտոմեքենա, բանկային ավանդ, բաժնեմաս, արժեթուղթ կամ այլ արժեքավոր ակտիվ: Փոխարենը տարեցտարի աճել են նրա վարկային պարտավորությունները:

2021 թվականին Մերի Գալստյանը ստացել է շուրջ 7,3 միլիոն դրամ աշխատավարձ եւ միաժամանակ վերցրել է 7 միլիոն դրամի վարկեր: Այդ ժամանակ որեւէ ակտիվ դեռեւս չի հայտարարվել:

2022 թվականին պատգամավորի միակ եկամուտը կազմել է 8,2 միլիոն դրամ աշխատավարձը, սակայն նա արդեն ունեցել է 6,4 միլիոն դրամ վարկային պարտավորություն: Միաժամանակ միայն բնակարանի վարձակալության համար վճարել է ավելի քան 3,2 միլիոն դրամ, իսկ վարկերի մարման համար՝ եւս 2,1 միլիոն դրամ:

2023 թվականը դարձել է ամենաակտիվ ֆինանսական տարիներից մեկը: Ընդհանուր եկամուտները կազմել են ավելի քան 24 միլիոն դրամ, սակայն դրանցից 13,6 միլիոն դրամը ոչ թե աշխատավարձ է եղել, այլ նոր վարկեր: ԱԿԲԱ բանկից, Էվոկայից, HSBC-ից եւ Ամերիաբանկից ստացված վարկային միջոցների արդյունքում պարտքային բեռը շարունակել է աճել:

2024 թվականին պատգամավորի աշխատավարձն արդեն գերազանցել է 10,8 միլիոն դրամը, սակայն վարկերի մնացորդը հասել է 15,6 միլիոն դրամի:

Իսկ արդեն 2025 թվականի ավարտին, երբ Մերի Գալստյանը փաստացի ավարտում է իր պատգամավորական գործունեությունը, նրա պարտավորությունները հասել են 23,1 միլիոն դրամի:

Ուշագրավ է, որ այս ամբողջ ժամանակահատվածում պատգամավորը շարունակել է բնակարան վարձակալել՝ տարեկան միջինը 3 միլիոն դրամի չափով ծախս կատարելով, սակայն այդպես էլ որեւէ անշարժ գույք չի հայտարարագրել:

Ստացվում է, որ ՔՊ պատգամավոր Մերի Գալստյանի պաշտոնավարման տարիները նշանավորվել են ոչ թե անձնական ակտիվների կուտակմամբ, այլ պարտքերի հետեւողական աճով: Եթե 2022 թվականին նրա պարտքը կազմում էր 6,4 միլիոն դրամ, ապա ընդամենը երեք տարի անց այն գրեթե քառապատկվել է՝ հասնելով 23,1 միլիոն դրամի: Հարցն արդեն միայն հայտարարագրերի թվերը չեն: Հարցն այն է, թե ինչպես է հնարավոր հինգ տարի շարունակ ստանալ աճող աշխատավարձ, չունենալ հայտարարագրված որեւէ գույք, բայց միաժամանակ տարեցտարի մեծացնել վարկային բեռը: Եւ սա այն ֆոնին, երբ 2026 թվականի նոր գումարման խորհրդարանում Մերի Գալստյանն այլեւս չի լինի, սակայն նրա ֆինանսական պատմությունը շարունակելու է հարցեր առաջացնել հանրության շրջանում:

Նշենք, որ Մերի Գալստյանը 44-օրյա պատերազմի օրերին, երբ Նիկոլ Փաշինյանի տիկին Աննա Հակոբյանը ջոկատ էր կազմել սահման մեկնելու համար, պարզվեց Մերի Գալստյանը եւս «Էռատո» ջոկատում է, որոնց այդպես էլ չհաջողվեց մարտի դաշտ հասնել:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Վենեսուելայում տեղի ունեցած երկրաշարժից հետո գրեթե 1.8 միլիոն մարդ, այդ թվում՝ մոտ 680,000 երեխա, մարդասիրական օգնության կարիք ունի, ասվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) հայտարարության մեջ: «Երեխաները կազմում են մոտավորապես 680,000 մարդ այն 1.8 միլիոն մարդկանցից, ովքեր մարդասիրական օգնության կարիք ունեն հունիսի 24-ին Վենեսուելայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերից հետո», - ասվում է հայտարարության մեջ: Ըստ կազմակերպության ներկայացուցիչ Մանուել Ռոդրիգես Պումարոլի՝ Բոլիվարյան Հանրապետությունում, երկրի հիվանդանոցները «աշխատում են ամբողջ հզորությամբ, հազարավոր երեխաներ չունեն մաքուր ջրի հուսալի հասանելիություն, եւ շատ դպրոցներ լրջորեն վնասվել են»: Նշվում է, որ հանրապետության մայրաքաղաք Կարակասում վնասվել է 432 դպրոց, կամ «տարածաշրջանի բոլոր կրթական հաստատությունների մեկ երրորդից ավելին»: Կենդանի մնացած դպրոցները ժամանակավորապես օգտագործվում են որպես ապաստարաններ անօթեւան մնացած ընտանիքների համար:

## ՇՈԳԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

Անցած շաբաթվա ընթացքում Եվրոպայում ուժեղ շոգի պատճառով մահացել է ավելի քան 1,300 մարդ: Այս մասին X-ի իր էջում գրել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Թեդրոս Ադհանոմ Գեբրեյեսուսը: «Հունիսի 21-ից ի վեր Եվրոպայում գրանցվել է բարձր ջերմաստիճանների հետ կապված ավելցուկային մահացության ավելի քան 1,300 դեպք: Ջերմային սթրեսը հաճախ անվանում են «լուռ մարդասպան», իսկ Եվրոպայի բնակելի տները, աշխատավայրերը եւ դպրոցները նախատեսված չեն եղել նման ջերմաստիճանների համար», -գրել է նա: ԱՀԿ-ի ղեկավարը նշել է, որ Եվրոպան այն մայրցամաքն է, որտեղ տաքացումը տեղի է ունենում Երկրագնդի վրա ամենաարագ տեմպերով. ջերմաստիճանի աճի տեմպերը կրկնակի գերազանցում են համաշխարհային միջին ցուցանիշները: «Ներկայումս 150 միլիոն մարդ տառապում է ծայրահեղ շոգից. հարյուրավոր մարդիկ մահացել են, դպրոցները փակ են, իսկ էներգահամակարգերն աշխատում են հնարավորությունների սահմանագծին»,- նշել է նա: Գեբրեյեսուսը նշել է, որ կլիմայի փոփոխության եւ գլոբալ տաքացման ազդեցության ներքո անոմալ շոգը, որը նախկինում համարվում էր «սերնդի մեջ մեկ անգամ» պատահող երեւույթ, այժմ դիտվում է գրեթե ամեն տարի: ԱՀԿ-ում եվրոպական երկրներին կոչ են արել ներդնել շոգի պայմաններում առողջության պաշտպանության գործողությունների ծրագրեր՝ կլիմայի փոփոխության հետեւանքներից բնակչության առողջության պաշտպանության ավելի լայն ծրագրի շրջանակներում: Հունիսի կեսերին Եվրոպայում հաստատվել է անոմալ շոգ եղանակ: Մի շարք երկրներում օդի ջերմաստիճանը մոտենում է 40 աստիճանի նշագծին, իսկ որոշ տեղերում նույնիսկ գերազանցել է այն: Եղանակային վտանգի ամենաբարձր՝ կարմիր մակարդակ է սահմանվել Ֆրանսիայում, Բրիտանիայում, Նիդեռլանդներում եւ Իտալիայում:

● *Անցած 3 օրում գրանցվել է 54 ավտովթար. 4 մարդ զոհվել է, 69-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԱԿԲԱ ԲԱՆԿ

# ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ



Երեւանից Տավուշի Նորաշեն գյուղ տեղափոխված Գարիկ Փայտյանն ու Էսթեր Զաքարյանը որոշեցին ապացուցել, որ գյուղական կյանքը կարող է լինել ոչ միայն խաղաղ, այլեւ ստեղծագործական ու հաջողության հնարավորություններով լի:

Երեւանի պետական համալսարանի շրջանավարտներ Գարիկն ու Էսթերը ամուսնությունից հետո վերադարձան Գարիկի հայրենի գյուղ՝ Նորաշեն՝ սեփական գործը սկսելու նպատակով: Սկզբնական փուլում դժվարությունները բազմաթիվ էին, սակայն կամքի ուժն ու համառությունը նրանց օգնեցին ստեղծել յուրահատուկ վայր՝ Ջովակ հյուրատունը:

Հյուրատուն հիմնելու գաղափարը Գարիկի մոտ առաջացել էր դեռ 2016-ին, երբ զբոսաշրջիկների համար Տավուշում հատուկ արշավներ էր կազմակերպում ու առաջանում էր գիշերակացի խնդիր: Արդեն 2018-ից հյուրատունը սկսեց զբոսաշրջիկներ ընդունել, իսկ 2021-ին երիտասարդները հյուրատանը կից գաստրոբակ ստեղծեցին՝ հնարավորություն տալով իրենց հյուրերին համտեսել ավանդական տավուշյան ուտեստները:

Ջովակ հյուրատունը Ակբա Ֆեդերացիայի եւ NABU Հայաստանի «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի շահառուներից է: Տրամադրված դրամաշնորհի միջոցներով երիտասարդները կարողացել են ավարտուն տեսքի հասցնել գաստրոբակը եւ աշխատել տարվա բոլոր եղանակներին: «Ջովակն իմ պապական տունն է, այստեղ մենք սկսել ենք հյուրեր ընդունել դեռ 2018 թվականին՝ առանց ներդրումներ կատարելու: Երբ որոշեցի հյուրատան սենյակը վերանորոգել, նախատեսված գումար չունեի: Ինքս եմ սովորելով վերանորոգել: Հետագայում մենք խնդիր ունեինք բոլոր սեզոններին սպասարկել զբոսաշրջիկներին, եւ երբ Ակբա Ֆեդերացիան եւ NABU Հայաստանը մրցույթ հայտարարեցին գաստրոբակերի զարգացման համար, մենք էլ դիմեցինք ու հաջողեցինք. այժմ կարողանում ենք հաղթահարել սեզոնայնությունը: Ցանկացած աջակցություն ոչ միայն կարեւոր է գործում, այլեւ ինչ-որ ժամանակահատված «առաջ է զցում»: Ես շատ երիտասարդների համար օրինակ եմ ցանկանում լինել, թե ինչպես կարելի է գյուղում զրոյից սկսել եւ հաջողել»,- նշում է Ջովակ հյուրատան հիմնադիր Գարիկ Փայտյանը:

Ջովակ հյուրատունը գտնվում է Տավուշի մարզի Նորաշեն գյուղում (հեռ. +374-95-56-45-28): Ակբա Ֆեդերացիան Ակբա բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: Ակբա բանկում ունեցած մասնակցության շնորհիվ Ակբա Ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու ամրապնդմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին: *(Գ)*

## ՅՈՒՆԻԲԱՆԿ

# 9,3 ՄԼՐԴ ԴՐԱՄ՝ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆԸ

**«Յունիբանկ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում ամփոփվեցին Բանկի գործունեության 2025 թվականի արդյունքները: Հաշվետու տարին Յունիբանկի համար նշանավորվեց կարեւոր ձեռքբերումներով եւ ռազմավարական նախաձեռնությունների իրականացմամբ:**




Հաշվետու տարում լրացավ Յունիբանկի IPO-ի իրականացման տասը տարին: Այս ժամանակահատվածում Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքն աճել է շուրջ 70%-ով, ինչը վկայում է հետեւողական աճի, ներդրողների վստահության եւ բաժնետերերի համար երկարաժամկետ արժեքի ստեղծման մասին: Յունիբանկը Հայաստանում առաջինն էր, որ թողարկեց անժամկետ պարտատոմսեր եւ ավարտեց դրանց տեղաբաշխումը սահմանված ժամկետից զգալիորեն շուտ: Ներդրողների կողմից ցուցաբերված բարձր հետաքրքրությունն արտացոլում է շուկայի վստահությունը Բանկի հետագա զարգացման հեռանկարների նկատմամբ: Յունիբանկը 2025 թվականն ավարտել է 9,8 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթով: Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց շահութաբաժինների վճարմանն ուղղել 9,3 մլրդ դրամ:

Հաճախորդների համար առաջին ընտրության բանկ դառնալու ձգտումը շարունակում է մնալ Յունիբանկի հիմնական առաջնահերթություններից մեկը: Այդ նպատակով Բանկը հետեւողականորեն զարգացնում է ինչպես մասնաճյուղային ցանցը, այնպես էլ սպասարկման թվային ուղիները՝ ապահովելով ֆինանսական ծառայությունների հասանելիությունը՝ անկախ հաճախորդի եւ Բանկի փոխգործակցության ձեւաչափից: Այսօր Յունիբանկի հաճախորդ կարելի է դառնալ ամբողջությամբ առցանց՝ մոբայլ հավելվածում անցնելով կենսաչափական նույնականացում: Արհեստական բանականության տեխնոլոգիաները հետագա զարգացման կարեւոր գործիք են, եւ Յունիբանկը շարունակելու է ժամանակակից լուծումների ներդրումը՝ բիզնես գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Յունիբանկը ոչ միայն Հայաստանում, այլեւ տարածաշրջանում առաջիններից մեկն էր, որը ներդրեց արհեստական բանականության վրա հիմնված սկորինգային համակարգ, ինչը Բանկին հնարավորություն տվեց զբաղեցնել առաջատար դիրքեր տրամադրված POS վարկերի քանակով:

Փոքր եւ միջին բիզնեսի աջակցությունը շարունակում է մնալ Բանկի գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը: Յունիբանկը ձեռնարկատերերին առաջարկում է համապարփակ աջակցություն բիզնեսի զարգացման բոլոր փուլերում՝ ընկերության գրանցումից եւ հաշիվների բացումից մինչեւ վարկավորում, լիզինգ, էքվայրինգ եւ ժամանակակից թվային ծառայություններ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ՓՄՁ ներկայացուցիչներին ստանալ ֆինանսական ծառայությունների ամբողջական փաթեթը մեկ գործընկերոջից եւ կենտրոնանալ իրենց բիզնես նպատակների իրականացման վրա: Միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով Յունիբանկը հանդես է եկել որպես մի շարք նշանակալի միջազգային միջոցառումների գործընկեր, այդ թվում՝ Սինգապուրում անցկացված BAFT Asia Bank to Bank համաժողովի, Yerevan Dialogue ֆորումի, որը համախմբել էր պետությունների ղեկավարներին եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, ինչպես նաեւ FINTECH360 համաժողովի, որը նվիրված էր ֆինանսական ոլորտի թվային վերափոխման արդիական միտումների քննարկմանը:

2025 թվականի արդյունքներով Յունիբանկն արժանացել է Visa-ի «Strategic Partnership Award 2025» եւ Mastercard-ի «Excellence in Partnership Development» մրցանակներին:

2026 թվականը Յունիբանկի համար հոբելյանական տարի է լինելու: Բանկը կնշի իր հիմնադրման 25-ամյակը: Քառորդ դարի ընթացքում Յունիբանկն անցել է շուկայի նորաստեղծ մասնակցից մինչեւ Հայաստանի դինամիկ զարգացող բանկերից մեկի ճանապարհը՝ ապահովելով գրեթե 400 միլիարդ դրամի ակտիվներ: Moody's Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի երկարաժամկետ տեղական եւ արտարժույթով ավանդների վարկանիշը B1 մակարդակում՝ կայուն հեռանկարով:

Բիզնեսի զարգացման հետ մեկտեղ Յունիբանկը շարունակում է իրականացնել նաեւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր: Բանկի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ սպորտի, կրթության եւ հասարակական նշանակության նախաձեռնությունները:

*Գ.*

## «ԹԵԼ-ՍԵԼ»-Ը ԱՄՓՈՓԵԼ Է

**«Թել-Սել» ԲԲԸ-ն շարունակում է ընդլայնել ծառայությունների շրջանակը՝ ներդնելով նոր թվային լուծումներ եւ գրանցելով գործունեության առանցքային ցուցանիշների աճ: Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում ներկայացվեցին 2025 թվականի արդյունքները, որոնք վկայում են ընկերության կայուն զարգացման եւ արդյունավետ կառավարման մասին:**




Ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի խոսքով՝ վերջին 19 տարիների ընթացքում ընկերությունը շուկա է բերել նոր ծառայություններ եւ պրոդուկտներ, որոնք հետագայում դարձել են ոլորտի զարգացման չափանիշ, եւ այդ ուղղությամբ սկսել են շարժվել բազմաթիվ ընկերություններ:

2026 թվականի մայիսի դրությամբ Telcell Wallet հավելվածի նույնականացված օգտատերերի թիվը հասել է 544 հազարի՝ մեկ տարվա ընթացքում աճելով գրեթե 14 տոկոսով, իսկ ակտիվ օգտատերերի թիվը գերազանցել է 250 հազարը՝ աճելով 17.4 տոկոսով: «Թել-Սել» էկոհամակարգով իրականացված վճարումների ընդհանուր ծավալը 2025 թվականին կազմել է 962 միլիարդ դրամ՝ շարունակելով վերջին տարիների կայուն աճը:

Դրական դինամիկան պահպանվել է նաեւ 2026 թվականի առաջին ամիսներին: Շարունակել են աճել ինչպես «Թել-Սել» տերմինալներով, այնպես էլ Telcell Wallet հավելվածով կատարվող վճարումները: Տերմինալներով վճարումների ծավալն ավելացել է 6.5 տոկոսով, իսկ հավելվածով իրականացված գործարքների ծավալը՝ 10.3 տոկոսով, ինչը վկայում է թվային ֆինանսական լուծումների նկատմամբ աճող հետաքրքրության մասին:

Զգալի առաջընթաց է գրանցել նաեւ Telcell Visa թվային քարտը. քարտապանների թիվն արդեն գերազանցել է 100 հազարը, իսկ քարտով իրականացված վճարումների շրջանառությունն աճել է 115 տոկոսով: Միաժամանակ շուրջ 70 տոկոսով ավելացել են տվյալ պրոդուկտից ստացվող եկամուտները: Ընկերությունը շարունակում է զարգացնել նաեւ իր ծառայությունների ենթակառուցվածքը՝ զբաղեցնելով շուկայում միանձնյա առաջատարի դիրքը: Այսօր Հայաստանի ամբողջ տարածքում գործում է ավելի քան 4700 «Թել-Սել» տերմինալ:

Telcell Service դուստր ընկերության կողմից մատուցվող ծառայությունների շարքում Արտյոմ Ղազարյանն առանձնացրեց Power Bank Station-ների նախագիծը, որոնց թիվն արդեն հասել է շուրջ 500-ի, իսկ մինչեւ տարեվերջ նախատեսվում է այն հասցնել 1000-ի:

2025 թվականին ընկերությունը շուրջ 120 միլիոն դրամ է ներդրել տեղեկատվական անվտանգության ոլորտում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան տեխնոլոգիական լուծումներ առաջարկելու նպատակով: Ֆինանսական արդյունքների համաձայն՝ ընկերության հասույթը կազմել է 12.8 միլիարդ դրամ, իսկ ընդհանուր շահույթը՝ 992 միլիոն դրամ:

Տարեկան ժողովի ընթացքում ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Լիանա Հունանյանը ներկայացրեց նաեւ նոր նախագիծ, որի մեկնարկը կտրվի առաջիկայում: Ամփոփելով տարին՝ Արտյոմ Ղազարյանը պատասխանեց բաժնետերերին հուզող հարցերին, լսեց նոր առաջարկներ եւ շնորհակալություն հայտնեց բաժնետերերին, տնօրենների խորհրդին եւ «Թել-Սել»-ի ողջ թիմին:

*«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից*

*Գ.*

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ՌԵՆՇԻՆ»

Գ

# «ՌԵՆՇԻՆ»-Ը ՎԵՐԱԲՐԵՆԴԱՎՈՐՎՈՒՄ Է

**«Ռենշին» քաղաքաշինական-ներդրումային ընկերությունը հայտնում է իր վերաբրենդավորման մասին՝ ներկայացնելով նոր ռազմավարական տեսլական, ինքնություն եւ լոգոտիպ:**




«ՌԵՆՇԻՆ» ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ-ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՎԵՐԱԲՐԵՆԴԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վերաբրենդավորմամբ ընկերությունն ավելի հստակ արտահայտում է այն մոտեցումը, որով Ռենշինը արդեն երկար տարիներ գործում է՝ որպես քաղաքաշինական-ներդրումային ընկերություն՝ բարձրակարգ նախագծերի իրականացմանը զուգահեռ իր ներդրումներն ուղղելով եւ աջակցելով նաեւ կրթության, մշակույթի եւ ժամանակակից ապրելակերպի զարգացմանը նպաստող նախաձեռնություններին: Նոր վիզուալ ինքնությունը հիմնված է «Ռե» նախածանցի գաղափարի վրա. վերաիմաստավորել, վերափոխել, վերասահմանել, վերանորոգել: Լոգոտիպը, որը ժամանակակից մոտեցումներին համապատասխան է, «տառատեսակային է», «RE» տառերը ներկայացված են ավելի բարձր, ակտիվ են՝ ի տարբերություն մյուս տառերի: Կարմիր ապաթարց նշանը՝ վերեւում սլաքի պես, ուղղված է դեպի առաջ՝ արտահայտելով ընկերության դինամիկան՝ դեպի ամենաբարձր ստանդարտներ: Բրենդի դինամիկ ենթագիրը՝ «Renshin urban investments», «Renshin culture investments», «Renshin education investments» եւ այլն, արտացոլում է ընկերության ներկայությունը տարբեր ոլորտներում՝ պահպանելով ամբողջական ու ճանաչելի ինքնությունը:

«Այս փուլում մենք ավելի հստակ ենք ներկայացնում «Ռենշինի» լայն, ընդարձակ տեսլականը՝ քաղաքային զարգացումը դիտարկելով ոչ միայն կառուցապատման, այլեւ կրթության, մշակույթի եւ ապրելակերպի զարգացման համատեքստում: Մեզ համար «Ռենշինը» այն հենման կետն է, որի շուրջ ձեւավորվում են երկարաժամկետ արժեք ստեղծող նախագծեր եւ քաղաքի ապագա զարգացմանը նոր որակ հաղորդող միջավայրեր»:

*Անի Մավյան, «Ռենշին» ընկերության ռազմավարական զարգացման տնօրեն*

Այս տեսլականն արտացոլված է ընկերության բոլոր նախագծերում: Երեւանում առաջին երկնաքերների Skyline նախագծով «Ռենշինը» վերասահմանել է բարձրահարկության, Artlife Kempinski Residences-ով՝ բարձրաշխարհիկ ապրելակերպի, Բուզանդ 91-ով՝ քաղաքային կյանքի որակի մասին պատկերացումները, Թումանյան 8 հասցեում կառուցվող նոր բնակելի համալիրով՝ քաղաքի կենտրոնում ժամանակակից բնակելի միջավայրի ակնկալիքները, իսկ Սասնա Ծռեր I եւ II նախագծերով վերափոխել է Դավթաշենի բնապատկերը՝ նպաստելով տեղի անշարժ գույքի արժեւորմանը:

«Ռենշինի» նախագծերը վաղուց արդեն ընդլայնում են կառուցապատման սահմանները: Ընկերության ռազմավարությունն ընդգրկում է ինչպես քաղաքաշինական, այնպես էլ կրթական ու մշակութային ոլորտները, ինչի վառ օրինակն է «Հայ Վիրտուոզներ» ծրագրի «Վիրտուոզների բանաձեւը» նախագիծը, որին ընկերությունը աջակցել է 100 մլն դրամով:

Այս մոտեցմամբ՝ «Ռենշինը» հանդես է գալիս ոչ միայն որպես կառուցապատող, այլեւ որպես ներդրումային հիմք՝ իր փորձը եւ ներդրումային միջոցներն ուղղելով այն նախագծերին, որոնք երկարաժամկետ արժեք են ստեղծում ապագայի համար: Վերաբրենդավորումը եւս մեկ անգամ ընդգծում է ընկերության ներդրումային էությունը՝ «Ռենշինը» ներկայացնելով որպես միավորող էկոհամակարգ, որի ներքո տարբեր ոլորտներում ձեւավորվում են նոր նշաձող սահմանող նախաձեռնություններ:

***«Ռենշին»-ի մասին***

«Ռենշին» քաղաքաշինական-ներդրումային ընկերությունը մշակում, ներդնում եւ կառավարում է բարձրակարգ եւ նորարարական քաղաքաշինական նախագծեր՝ սահմանելով նոր՝ համաշխարհային ոսկե ստանդարտներին համապատասխանող նշաձող անշարժ գույքի ոլորտում: Ավելի քան 24 տարվա պատմություն ունեցող ընկերությունը իրականացրել է շուրջ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում եւ ներգրավել ավելի, քան 1 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրումներ: Լինելով Հայաստանում կառուցապատման ոլորտի միջազգային ստանդարտների ներդրման առաջնագծում՝ ընկերությունն օգտագործում է առաջադեմ տեխնոլոգիաներ, շեշտադրում կայունության գաղափարը եւ համագործակցում միջազգային առաջատար գործընկերների հետ՝ իրականացնելով սպասելիքները գերազանցող նախագծեր:

ՍԵՆՍԱՑԻՈՆ ՎԵՐԱԴԱՐՁ

**Բրազիլացի լեգենդար ֆուտբոլիստ Ռոնալդինյոն մեկնաբանել է իտալական Սերիա C-ն ներկայացնող «Ռավեննայի» կազմում խաղադաշտ վերադառնալու մասին շրջանառվող լուրերը: Նշենք, որ աստղային ֆուտբոլիստն ավելի վաղ պայմանագիր էր կնքել իտալական ակումբի հետ:**




Պատասխանելով այն հարցին, թե արդյոք նա դառնալու է «Ռավեննայի» լիարժեք խաղացող եւ հանդես է գալու թիմի կազմում՝ 45-ամյա նախկին կիսապաշտպանը տվել է դրական պատասխան. «Այո՛, դա ճիշտ է: Ասենք այսպես՝ սա ինձ համար նույնպես նոր մարտահրավեր է: Ես անպայման մի քանի րոպե կանցկացնեմ պաշտոնական խաղում, որից հետո արդեն կտեսնենք, թե ինչպես ինձ կզգամ»,- Ռոնալդինյոյի խոսքերն է մեջբերում Tribal Football-ը, գրում է armsport-ը: Հիշեցնենք, որ իր փառահեղ կարիերայի ընթացքում Ռոնալդինյոն հանդես է եկել այնպիսի հանրահայտ ակումբներում, ինչպիսիք են «Գրեմիոն», ՊՍԺ-ն, «Բարսելոնան», «Միլանը», «Ֆլամենգոն», «Ատլետիկո Մինեյրոն», «Կերետարոն» եւ «Ֆլումինենսեն»: Բրազիլիայի ազգային հավաքականի կազմում նա դարձել է Աշխարհի առաջնության, Ամերիկայի գավաթի եւ Կոնֆեդերացիաների գավաթի հաղթող: Կատալոնական «Բարսելոնայի» հետ Ռոնալդինյոն նվաճել է Չեմպիոնների լիգայի գավաթը, երկու անգամ հաղթել Լա Լիգայում եւ ՈւԵՖԱ-ի Սուպերգավաթում: Իսկ «Միլանի» կազմում բրազիլացին հռչակվել է Իտալիայի չեմպիոն:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

# ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՄԻԱՆԳԱՄԻՑ 4 ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ




Արդշինբանկը ճանաչվել է Global Banking & Finance Review Awards 2026թ. մրցանակաբաշխության հաղթող միանգամից չորս անվանակարգերում՝ «Լավագույն մանրածախ բանկ», «Լավագույն փրայվիթ բանկ», «Լավագույն կորպորատիվ բանկ», «Լավագույն CSR բանկ»:

«Մենք ջերմորեն շնորհավորում ենք Ardshinbank-ին՝ Global Banking & Finance Review Awards 2026 մրցանակաբաշխության շրջանակում միանգամից չորս անվանակարգերում հաղթելու կապակցությամբ: Բանկի ձեռքբերումները արտացոլում են բարձր որակ, նորարարություն եւ սոցիալական պատասխանատվություն, որոնք բնորոշ են ժամանակակից ֆինանսական առաջնորդներին»,- նշել է Global Banking & Finance Review-ի խմբագիր Բարնալի Պալ Սինհան:

Անդրադառնալով բանկի գործունեությանը տրված բարձր գնահատականին՝ Արդշինբանկի վարչության նախագահ Արտակ Անանյանը նշեց. «Global Banking & Finance Review Awards-ի կողմից միաժամանակ չորս անվանակարգերում հաղթող ճանաչվելը Արդշինբանկի համար մեծ պատիվ է: Սա մեր ամբողջ թիմի նվիրվածության, մեր հաճախորդների վստահության եւ տարիների ընթացքում կուտակած փորձի արտացոլումն է: Մանրածախ, փրայվիթ, կորպորատիվ բանկինգում եւ սոցիալական պատասխանատվության ոլորտում միաժամանակ գերազանցության ճանաչումն ապացուցում է, որ Արդշինբանկը շարունակում է սահմանել ոլորտի բարձրագույն ստանդարտները Հայաստանում»:

Global Banking & Finance Review-ն միջազգային հեղինակավոր հարթակ է, որն ամեն տարի գնահատում է ֆինանսական հաստատությունների ձեռքբերումները նորարարության, ծառայությունների որակի, կառավարման արդյունավետության եւ ֆինանսական շուկաների զարգացման ոլորտներում:

Արդշինբանկը Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի ավելի քան 580,000 հաճախորդ, որոնց սպասարկում է բանկի 2,300-ից ավելի աշխատակից: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 73 մասնաճյուղերով:

*Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)*

*● Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում հուլիսի 10-ին՝ ժամը 19:30-ին, կկայանա «Իմ կնոջ ամուսինը» կատակերգությունը:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:**

*Արսեն Գասպարյան, 57 տարեկան*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

*Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ինչպիսի՞ իրավական գործիքներ են առկա շահերի բախման իրավիճակները զսպելու կամ կառավարելու համար:**

*Լիանա Սարգսյան, 47 տարեկան*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Շահերի կառավարման իրավական մեխանիզմները գտնվում են շարունակական եւ պարբերական բարելավման գործընթացում: Այդուհանդերձ, գործող իրավակարգավորումներն արդեն իսկ հնարավորություն են տալիս կառավարելի դարձնել դրանք՝ խուսափելու, հայտնելու, լուծելու կառուցակարգերի միջոցով: «Հանրային ծառայության մասին» օրենքը պաշտոն զբաղեցնող անձանց, որպես կանխարգելման մեթոդ, նախ եւ առաջ առաջարկում է ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման ընդունման նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց: Միաժամանակ, նախատեսվում են առանձնահատուկ կարգավորումներ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող անձանց եւ այդպիսիք չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար: Կարգավորումների հիմնական տրամաբանությունն առաջին դեպքում ենթադրում է շահերի բախման մասին վերադաս անձին հայտնելու պարտավորություն, ով առաջարկում է իրավիճակի լուծմանն ուղղված որոշակի քայլեր: Մինչդեռ, վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող անձանց եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց օրենքը հնարավորություն է տալիս խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

*Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով*

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի*



Առեղծվածային ու ողբերգական դեպք Արարատի մարզում. հրշեջ-փրկարարները, մարելով «Nissan Rogue»-ի սրահում առաջացած կրակը, այնտեղ հայտնաբերել են 4 կիսամոխրացած մարմիններ:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել




«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| Շիրակ | + 5 + 9 | + 19 + 24 |
| Կոտայքի լեռներ | + 5 + 8 | + 19 + 23 |
| Կոտայքի նախալեռներ | + 10 + 13 | + 25 + 28 |
| Գեղարքունիք | + 5 + 9 | + 19 + 24 |
| Լոռի | + 6 + 10 | + 23 + 27 |
| Տավուշ | + 7 + 11 | + 24 + 28 |
| Արագածոտնի լեռներ | + 5 + 9 | + 19 + 23 |
| Արագածոտնի նախալեռներ | + 11 + 14 | + 25 + 30 |

| | | |
|---|---|---|
| Արարատ | + 11 + 15 | + 29 + 32 |
| Արմավիր | + 15 + 17 | + 30 + 33 |
| Վայոց ձորի լեռներ | + 6 + 10 | + 20 + 23 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 13 + 16 | + 30 + 33 |
| Սյունիքի լեռներ | + 5 + 8 | + 17 + 20 |
| Սյունիքի նախալեռներ | + 10 + 13 | + 20 + 24 |
| Սյունիքի հովիտներ | + 16 + 19 | + 27 + 31 |
| Երեւան | + 14 + 16 | + 30 + 32 |

## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ________________

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.06.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*